

կուռն Եւ չը գիտէի, ով է նա եւ որտեղից է գալիս, բայց յետոյ, տարիներ յետոյ իմացայ, որ այդ խղճուկ ու խորհրդաւոր ճանապարհորդին շատ եւ շատ հառաչող դարձերն հարցնում էին՝ «Կոտուկ մեր աշխարհէն խաբրիկ մը չուրի՞նք...» Եւ նա որքան խաբրիկներ էր բերել, որքան արցունքներ, նաեւ որքան յոյսեր... Տարիներ յետոյ բազմը մեզ վիճակից միասին մի քանի տարի շարունակ ուսուցիչ լինել, տառապել եւ խնդալ միասին, ապրել եւ յուսալ միասին Երեւ տարի էր անընդամտ եւ այն որպիսի կեանք, Տէր Աստուած՝ Հեռու, թիւր-քական սահմաններին մօտիկ մի կենտրոնական գիւղ կայ Երեւանեան նահանգում, որ կոչվում է Իգդիր, մենք այնտեղ էինք։ Տարօրինակ ժողովուրդ կայ այդ Իգդիրում, Պարսկաստանի գաղթականներ են։ Հարթութեան վրա պարսիկ բռնակալութեան տակ յղկված ու կոկված վրտանգաւոր բնակչութիւններ, ռազմական կեանքից, ճակատ առ ճակատ պայքարից դուրս մնացած ձկուն տարրեր, որոնք դարերի ընթացքում մշակվել են եւ սերնդէ սերունդ կը տակել են մանր կրքերի, մօլթ ինտրիգների մի տխուր ժառանգութիւն։ Որքա՛ կուսակցութիւններ կային այդ ժամանակ, ան ունի, որքան ատելութիւն այն փոքրիկ, խաւար անկիւնում, որ ետում էր, ինչպէս այրող նիւթերով լեցուն մի կաթսայ։ Այդտեղ էինք մի խումբ ուսուցիչ ընկերներով Թաւադարեանի հետ, այդ փոթորիկով մէջ, վառվում էինք, տընքում ու աշխատում մեր իսկ չարչարողներին, մեր միւր բղկթողներին համար՝ Օ՛, կոյր տգիտութիւն, ինքնապաշտ արտասուելի տգիտութիւն, որքան թոյն, որքան դառնութիւն ճաշակել տուի մեզ։ Յուսահատեցողիչ, կսկծալի մի կեանք էր, միշտ կարօտ նիւթապէս, միշտ տանջված բարոյական եւ ֆիզիքապէս։ Մենք՝ աւելի երիտասարդներս, լքանվում էինք, արտասովելու չափ յուսահատվում, տգէտ չկամութեան, անմիտ ու բիրտ անտարբերութեան կամ չարութեան հանդէպ։ Մեր աւագ ընկերը՝ Ալեքսանդր Թաւադարեան, այդ շատ ապրած, շատ տանջված ազնիւ հոգին հաւատ էր ներշնչում մեզ անփորձներին, փոքրողներին, նրա ձայնն էր մեղմում մեր ցան ու կոկիծը, եւ ինչպէս դէպի լեռը բարձրացող մանուկներին, մեզ գրաւում էր անդադար գեղեցիկ հեռանք-կարներով։

Ինչեր էր տեսել այդ մարդն իր կեանքում, որքան դառնութիւններ, որպիսի սեւ անեք-րախտապիտութիւն զանազան ժամանակներում եւ այժմ պակասը լրացնում էր Իգդիրը։ Եւ սակայն երբէք նրա սէրը չը նուազեց դէպի հայ ժողովուրդը, երբէք նրա հաւատը չը թուլացաւ դէպի նրա լաւագոյն ապագան եւ այդ սէրն ու հաւատը մեր մէջ էլ վառ պահեց։ Երբ մեզանից մէկն ու մէկը մի նոր անախտոթ դէպքից յուսակոր սկսում էր գանգատվել,

կան յատկութիւնը՝ վճռողական դեր էր խաղում։ Սակայն մենք ամենեւին տրամադիր չէինք միակողմանի լինել՝ այս օրինակներն ընդհանրացնել եւ գալ այն եզրակացութեան, որ բոլոր կուլտուրական երկրներում երկու սեռի իրաւունքների հաւասարութիւնը անխորի նոյն բարեբար հետեւանք կարող է առաջացնել։ Տեղական հանգամանքները եւ սրանց հետ կապված կանացի որոշ առանձնայատկութիւնները անշուշտ մեծ դեր են խաղում։ Գլխաւոր խնդիրը նրանումն է, որ իրաւունքները չեն տըրվում նրա համար, որովհետեւ դրանք ցանկալի են, այլ որովհետեւ ան հրաժեշտ են։ Շատ ճիշդ է նկատում մի կին գրող, թէ՛ «գաղափարութիւնը մի այնպիսի յատկութիւն է, որի համար մարդն ամենից առաջ դեռ պէտք է կրթված, պատրաստված լինի»։ Ստրուկներն էլ յաճախ չեն կամենում ազատութիւն վայելել եւ հասկանալի է թէ՛ ինչու։ Նոյն իսկ Շիլիսի կտրիճ կայանաւորին իր բանասիրութեան առանձնավայրը աւելի գեղեցիկ էր երեւում, քան թէ՛ ազատութիւնը։

Խօսելով ֆէմինիզմի բացասական հետեւանքների, առանձնապէս կանանց անբարոյականանալու մասին՝ «Արտէմիսը» անուշադիր է թողնում մի շատ կարեւոր հանգամանք, որ նա կանանց մէջ առնաստիճան ոչ մի խտրութիւն չէ դնում։ Այն ինչ արդարացի լինելու եւ միակողմանիութիւնների մէջ չընկնելու համար իսկական կինը պէտք է տարբերել ոչ միայն demi-monde-ի ներկայացուցիչներից, այլ եւ այն տիկնիկներից, մասնաւոր մի շարք կիսականացից, որոնք սիրում են փայլել իրենց salondame-ի այս վերջինների կեանքին եւ վաղը ու բարձրին հետեւելով՝ չէ կարելի ընդհանուր դատարկութիւն արձակել ամբողջ սեռի դէմ, որի նստում

ուրի էր կանգնում Թաւադարեանը, իր բարձր հոյակապ հասակով, վառ բարի աչքերը սեւեւ ուում էր նրան եւ քաղցր ժպիտով սկսում էր տան անգամ աւելի ծանր, աւելի լքանող օրինակներ բերել իր խաղաղութիւնը, Միւլից, Իւչքի-խաւից, իր արկածալից եւ փոքր անցնակից։ Եւ ինչպէս էր խօսում, այդպէս կը խօսի մի յաճախ դադարաւորական քարոզիչ, մի աննկուն մարտիկ, որին ոչինչ, ոչինչ չէ կարող լռեցնել, չէ կարող յետ կասեցնել իր փայփայած, սիրած գործից։ Դժուար էր նրան լսել առանց նրա յոյզերով ապրելու, նրա ցաւով տանջվելու, նրա մտքով վարակվելու։

Եւ այդ տեղական պայքարի, անցող աշխատանքի, հայ գիւղական ուսուցչի, մանաւանդ Իգդիրի հայ ուսուցչի կեանքին կապված անխուսափելի անախտոթութիւններ եւ պարտքեր մէջ, այդ գործով կազմակերպված ներկայացուցիչների, գրական երեկոյների, դասախօսութիւնների հետ միաժամանակ, նա մնում էր նոյն երազող հոգին, նոյն դժգոհը, նոյն փնտրողը, աչքերը միշտ դէպի հեռուն։ Նա կարծես այն տեղին չէր պատկանում, ուր գործում էր եռանդով, նա երբէք ամբողջապէս չէր ապրում այն իրականութեամբ, որի մէջ գտնվում էր, նա մեղանից չէր, մեզ պէս չէր, բայց մեզ հետ եւ աւելի տանջվելով ու աշխատելով հանդերձ՝ միշտ իր առանձին, ներքին մտածողութեան ունէր, իր նուիրական երազները։

Իգդիրում այս անգամ էլ նա չուող թռչուն էր, մեկնող ճանապարհորդ, յաջողակ հողմին ապաստող մի նաւ։ Երեք տարի գործում էր եւ սպասում։ Եւ ցնաց։ Դարձեալ արկածալից ու անհանգիստ կեանք, դարձեալ ոտքով կիզար ու փոշու մէջ երկար ճանապարհներ, վառագաւոր ու մոլթ գիշերներ, անձանթ ու կասկածելի վայրեր։ Գաղափարի մարդ էր եւ դադար չուէր։ Իւչքի-խաւից ու Դէրեկը մի-մի ուղիսականներ են համարեա կեանքի ծովերի վրա թափառող այս նաւին, որ այժմ դադար է առնում յաւիտենական նաւահանգստում, այնքան տառապանքներից, այնքան ճանապարհներից յետոյ։

Հանգիստ քեզ ընկեր, յայտն հանգիստ քո տանջված ոսկրներին, ցաւոտ մտքերով պատեղված քո գլխին, հանգիստ քո աղմկած, անհանգիստ հոգուն։

Ա. Ահարոնեան

ՎԱՅՐԵՆԻ ՎԱՐՄՈՒՆԻ

Նորեւս գո՛հ դարձաւ մի երիտասարդ կին, 29 տարեկան հասակում, ապահովված ընտանիքից։

Յղի լինելով, յիշեալ կինը արձամարդում է մայրական պարտականութիւնը եւ դեղ է լըմում, որպէս զի ոչնչացնէ իր պտուղը։ Եւ այսպէս ինքն իր անձը գերեզմանի մոցնելով, զբաղղութեան մէջ գցեց եւ իր ամուսնուն ածքներն են նրանք եւ ոչ թէ սերը։ Սրանք այն կանայքն են, որոնք արտաքին մի քանի խաղաղարկ բարեխոսչնչութիւնների հետ միասին՝ ներքուստ նոյնքան դատարկ են եւ ապականված՝ ինչպէս կիսախաղաղիկ կանայք։ Սրանք, այս տիկնիկները եւ սալօնական հեռուստահիւսերն են ֆէմինիզմի առաջադիմութեան ամենապիտան գաւառը։ Թէ չնամիւն բերէ Շօպէնհաուէրի եւ կանանց ուրիշ նշանաւոր հակառակորդների կծու նկատողութիւնները բացառապէս այս կանանց դէմն են ուղղված։ Եւ ինքնաձանաչ ու բարեկիրթ կինը պէտք է ամենից առաջ իր այս մօտիկ թշնամու դէմ կռուի։

Գալով բարոյականութեան ինդրին՝ պէտք է նկատել, որ այն բարոյականութիւնը, որ միայն ճշման եւ սարկական դատախազութեան հետեւանք է—դա բարոյականութիւնն է, այլ ըստ էութեան շատ աւելի վտանգաւոր է, քան թէ՛ իսկական անբարոյականութիւնը։ Բուն բարոյականութիւնը պէտք է գիտակցական լինի, պէտք է ազատութեան եւ ինքնաձանաչութեան ընդհանրացում լինի, պէտք է արտայայտվի իրեն մարմնացած համոզմունք։ Այս տեսակէտից մենք վերապահութեամբ միայն կարող ենք հաշտվել «Արտէմիսին» այն մտքի հետ, թէ՛ «այդ մարդու բարոյապէս հազար անգամ աւելի ինկած» լինելը հետեւանք է զարբերել ի վեր իր վայելած սանձարձակ ազատութեան—առում ենք՝ վերապահութեամբ, որովհետեւ «Արտէմիսը» մոռացութեան է տալիս այս խնդրի բնախօսական կողմը։ Մեզ կատարելապէս անհիմն է թուում սակայն «Արտէմիսին» միւս կարծիքը—այն է, եթէ կանայքն էլ տղամարդկանց նման ազատութիւն վայելէին՝ այն ժամանակ Վերքերու գերի, անասական

եւ իր երեխաներին Այդպիսի վայրենի դէպքերի մասին մենք զգաղղութիւն ենք ունեցել մի քանի անգամ «Մշակին» հաղորդելու։ Եւ թէպէտ «Մշակը» իր ժամանակին մի առաջնորդող նուիրեց այդ հարցի մասին, սակայն ցաւելով պէտք է ասել, որ այդ վայրենիութիւնը այն ատիժանի խոր արմատներ է գցել մեր տգէտ մայրերի մէջ, որ ոչ թէ միայն մի առաջնորդողով, այլ թէկուզ օրն ի բուն գլուխը տաքացնէ, դարձեալ չէք կարող հասկանալ եւ համոզել այդպիսի անգութ մայրերին, որ այդ միջոցին դիմելը, այդ անխիղճ վարմունք գործ դնելը նշանակում է կատարեալ կորստի մասնել իրանց եւ իրանց ձեռքերով իրանց համար գերեզման փորել։

Եթէ մեր մօզային երկրպագող մայրերը չեն ցանկանում մայրական պարտականութիւնները սրբութեամբ կատարել, հապա էլ ինչու օրերուց եղած ժամանակ ամեն կերպ աշխատում են չուտով մարդու գնալու։ Ել ինչու համար իրանք ծախու ապրանք են ձեռացնում իրանց... Ո՛չ, դա վերին աստիճանի յիմար վարմունք է, այդ վարմունքը հակամարդկային գործ է եւ անգութ մարդապաշտութիւն է։ Ամուսնական լուծը ով որ փափագում է կրել իր վզին, նա անպայման աչքի առաջ պէտք է ունենայ մայրական բոլոր պարտականութիւնները։ Այլ կերպ իրաւունք չունեն նրանք ամուսնութեան մասին մտածելու։

Ար. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 4-ին

Կարա-Մուրզայի, ժողովրդական այդ եռանդուն երգչի մահվան պատճառած ցաւը դեռ չը փարատված մեր սրտերից, կրկին տեղի է ունենում մի ուրիշ ցաւալի կորուստ։ Միաժամ Մ. Նիկոլայեան հոգեկան հիւանդութիւն ստանալով, տառապում է, ինչպէս պատմում են, իր հայրենի գիւղում։ Վաղարշապատում եւ բժշկվում է գրեթե անբերելի ձեռքի տակ։

Կարծեմ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան բաժնիպետ պարոնը է ուշադրութիւն դարձնել իր հիւանդ ուսուցչի վրա, ինչպէս տանել եւ թող չը տալ նրա տգէտ մեթոտորներին, թերեւս որ եւ է դիտաւորութեամբ, գրեթե անբերելի ձեռքի տակ նրան, մասնաւորապէս որ պ. Նիկոլայեանը ունի մի կօրիկ, դուռն տնտեսած իր կեանքի սեւ օրերի համար։ Հարկաւոր է հոգ տանել եւ նրան ուղարկել Օդեսա, Կիւով, Վիեննա, Պարիզ եւ այլն, ուր այդպիսի հիւանդների համար առանձին բուժարաններ կան հաստատված։

Մայրաք նկատեան ուսուսանչերի մէջ եղաւ անձնաւորութիւն է։ Նա յայտնի երաժշտագետ Ռուբինյանէնի առաջադէմ աշակերտներից—էր, սակայն հոգեկան հիւանդութիւնը այլ կերպ տնօրինեց։ Նա ունի հեղինակութիւններ, որոնցից միայն մէկն է լոյս տեսել, դա պատարագի երգեցողութիւնն է, որ տարած-

ընաղըներով միայն ապրող մարդկութիւն մը գոյութիւն պիտի ունենար աշխարհի վրա։ Այս կարծիքը հակառակ ապացոյցները մենք վերեւ արդէն առաջ բերինք։

Միւս կողմից՝ բարոյականութեան գաղափարը պէտք է աւելի լայն հիմքերով հասկանալ եւ ոչ թէ միայն սեռական ինդիքների հետ կապել։ Ինքնաձանաչութիւն, ազնիւ պարտաճանաչութիւն, բնաւորութեան կրթութիւն, մի խօսքով մարդկայնանալ—անա բարոյականութեան իսկական բովանդակութիւնը։

Ի վերջոյ չը մոռանանք առաջ բերել «Արտէմիսին» մի այլ կարծիք—«Ֆէմինիզմը կուզէ միայն ֆիզիքական տարբերութիւն մը տեսնել առն եւ կնոջ մէջ, եւ ուրիշ ոչինչ»։ Սա մենք համարում ենք միանգամայն սխալ։ Ֆէմինիստական շարժման կենսունակ եւ նորագոյն վարդապետութեան իդէալն է կանացի անհատականութիւնը։ Ստեղծելու եւ այս ձեւը ստեղծելու մէջ մենք աւելի շատ ենք տեսնում ճշմարտութեան իմաստուն կարգադրութիւններին։ Եւ այս երկուսը փոխադարձաբար լրացնում են իրար։ Ժակ Լուրըն միանգամայն ճիշդ է նկատում։ «Ծառ ծառիմով մի կարծիք էլ թէ կինը եւ տղամարդը հաւասար են։ Բացարձակ հաւասարութիւն միայն մասթեմատիկայի մէջ գոյութիւն ունի։ Կինը երբէք չէ կարող դառնալ տղամարդու հոգեկան պատկերը։ Նա անհրաժեշտօրէն պէտք է ուրիշ կերպ լինի։ Եւ Լուրըն շատ խելօք կերպով ֆէմինիզմի ամողջ պրօյէկտը մէջ ընդհանուր հարցի է վերածում—այն է՝ «արեւելք մարդկային առաջադիմութեան համար նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ կնոջ հոգեկան եւ մտաւոր կարողութիւնները լինէին ինքնուրոյն եւ ոչ

ված է բոլոր ուսուսանչ եկեղեցիների մէջ, Այդ նշանաւոր երկը իր տխուր մեղդիներով, մանաւոր նրա մի քանի կտորներով՝ ասիական երաժշտութեան յատուկ ներշնչանքով թափափ հիացմունք են պատճառել Եւրօպական յայտնի երաժիշտներից շատերին։ Պ. Նիկոլայեանի կազմէ գրեթէ ամեն տեղ։ Նա ունի եւ շատ անոթող գրուածքներ, շարականներ, տաղեր, մեղդիներ, երգեր եւ ժողովրդական լէլեններ։ Հարկաւոր է օր առաջ նրանց ապահովել կորսուած լոյս ամել տպագրութեամբ։

Թ. Ներսիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ կովկասի կառավարչապետ գեներալ-ադյուտանտ իշխան Գ. Ս. Գօլցին ժամանել է Պետերբուրգ։

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացվել, որ Բազումի Բիբի-Էլյաթ կոչված նաւթահողի վերջին մեծ հրդեհից, որ տեղի է ունեցել յունիսի 4-ին եւ 5-ին, աստիկ վնասվել է Թիֆլիսի նաւթարդիւնարեւոյնեան ընկերութեան նաւթանքը։ Այդպիսի բոլոր արհեստանոցները վիշկաները, գրասենյակը եւ նաւթի ամբարանները։ Այդ վնասը զգալի է մասնաւորապէս պատճառով, որ միայն այժմ, երբ նաւթի գինը բարձրացել է, ընկերութիւնը սկսել է յոյս կապել, որ նրա գործերը կը կենդանան եւ նորից կարելի կը լինի սկսել նաւթահանաչարածութիւնը։

Ուրբաթ, մայիսի 31-ին, Մարտգօրի ս. Անտոն վանքի վրա, Թիֆլիսի նահանգում, երեկոյեան մօտ 7^{1/2} ժամին յարձակվեցին չարագործները, որոնք ներս թափվեցին եկեղեցի երեկոյեան ժամատաղութեան ժամանակ, եւ կողպեցներ։ Այն օրպէս, երբ Գերման վարդապետը բեմ էր բարձրացել, չարագործները տեղական հազուատներով, ներս խուժեցին եկեղեցի եւ սկսեցին հրացաններ եւ բէլօվէյնք արձակել դէպի տաճարի առաստաղը եւ կամարները։ Եկեղեցում ներկայ եղողներին չչմեցնելու նպատակով Աղօթողները, չարագործների անապատելի երեւալուց չչկված, թափվեցին դանազան անկիւններում։ Աւագակներից մի քանիսը լարձրացան բեմը, բռնեցին զգեստաւորված վարդապետին եւ նրա կրծքին մերկաբաժ արեւ ուղղելով՝ պահանջում էին փողը։ Եւ վանքի հարստութիւնների տեղը։ Մնացածները սկսեցին կողպեցնել եկեղեցին։ Կողպուտից յետոյ, չարագործները, որոնք տասը հոգի էին, հեռացան վանքից եւ փախան դէպի անտառ։

Ղրիմի գաւառների թաթարներից շատերը առաւելապէս սակաւահոգները, միջնորդում են Տաւրիկեան նահանգապետի առաջ՝ արտաքսում։

միայն անդադարձած։ Հեղինակը այս հարցին անմիջապէս տալիս է դրական պատասխան։ Այս, համաձայն ենք «Արտէմիսին» հետ թէ՛ «մայրերն են, որ ազգեր կուտանաւ։ Բայց ամեն մի ազգի կենսունակութեան, մտաւոր եւ բարոյական առաջադիմութեան աստիճանը պայմանաւորվում է, ի միջի այլոց, մայրերի որքան կու՛ն Արեւելքին էլ է մայր, եւրօպացին էլ չինացին էլ է ազգ, անգլիացին էլ թէ՛ ազգն է այս երկուսից նախանձելին—սա արդէն հասկացողութեան եւ մասնաւոր ճաշակի իմացի է։

Այս բոլոր կարծիքների տարբերութիւնը մեր ընդհանուր տեսակէտը չեն խանգարում։ Եւ սակայն սրտանց ողջունել հայ կանանց առաջին օրգանի հրատաքարութիւնը։ Սակայն մի համեստ խորհուրդ։ Սղէք ձեր դաւանանքի մէջ ինչ գոյն էլ որ կամենաք, բայց մի վիթխարի չարժան էութիւն մի խեղաթիւրէք։ Եթէ դա տեղի է ունենում յանուն ձեր դաւանանքի յանուն հայկական ընտանիքի անաղաղութիւնը, իմացեք, որ մի կողմից նպատակով է արդարացնում միջոցը, միւս կողմից, հաւատացեք, որ ձեր այդ միամիտ իդէալիզմը կը յաջորդէ մի սոսկալի հիւսնաքարութիւն։ Եւ Եւրոպական էութիւնը իր խեղաթիւրէքը զօրեղ ճիւղանքով զլուծում է մի մասնաւոր կանանց զինը նրանց ապագայ մարտնչական համար, որ այսպէս թէ այնպէս անխուսափելի է լինելու։

Վ. Նալբանդեան

